հաստատունոց և հեղանիւթոց տեսակարար ծանրութիւնը կ'առնուի ջրոյ համեմատութեամբ. իսկ կազայնոց տեսակարար ծանրութիւնը կ'առնուի օդուն համեմատութեամբ։

Կը շարունակուի:

Գոմէնժի Գերեզմանոցն:

Ի՜նչ յիշատակ կ'արթըննայ հոգւոյս մէջ, և ի՜նչպիսի մտածութիւններ կ'արթընցընէ իրեն հետ։ Պիւրենեանց առաջին ստորոտներուն մօտ, լեռներն դեռ գեղեցիկ բլրակներ են. Գոմէնժի (Comminges) հին և հոյակապ եկեղեցւոյն առջև կու բացուի զուարճալի հովիտ մը, որուն նայելով անուանի բանաստեղծ մը, աշխարհիս ամենէն գեղեցիկ հովիտը անուանեց։ Երբոր աս լեռներուն մէջ կու մտնես, և այս դրախտանման հովտէն կ'անցնիս, դեռ չհասած համանուն աւանը՝ նայէ աջ կողմդ հասարակաց ճամբուն վրայ, և հիացիր այն դալարեաց բազմութեանը և այն ծաղկանց գեղեցկութեանը վրայ։ Տես մարգագետնին մէջ այն բնակարանն, զոր վարդենիք կ'անուշահոտեն, կաղամախք շուք կու ձգեն անոր վրայ, որ քեզի երջանկութեան երևոյթներ կ'ընծայէ, և կու կարծեցընէ նայողին թէ հոն անվերջանալի տօնահանդէս մը կայ։

Քիչ մ'ալ յառաջէ և տես եկեղեցւոյն քով անհարթ երկիր մը, զոր մեռելաթաղին բահն միայն կը փորէ. աչուըներդ կու զարնեն ճերմակութեամբ փայլած մահարձանի մը վրայ։ Եթէ հարցընես թէ ի՛նչ է ատիկայ, կու լսես դողդոջուն ձայնէ մը. թէ՝ այդ մարմանդներուդ վրայ իրենց թեթև քայլերովը վազվըռտող, և հոն իրենց հրճուալի ձայները ձգող, այս վարդենիներուս մէջէն՝ անոնց անուշահոտութիւնը սիրող, և այս իրենց ճակատը զովացընող հովանեաց տակէն, երկու մատաղ օրիորդք, երկու քոյրք, միանգամայն յափշտակուեցան՝ մահուան գեղնութեամբ և անշարժութեամբը. մէկ գիշեր մը երկուքներուն աչաց ալ բերաւ յաւիտենական քունը, և մէկ օր մը այս երկու կոյսերը իջուց 'ի հող։

Ուրեմն ոչ պատանեկութիւնն, ոչ գեղեցկութիւնն, ոչ ծնողաց սէրն, ոչ բախտը և ոչ բնակած տեղւոյն վայելչութիւնն, բան մը չկրնար ազատել զմեզ մահուանէ, այլ անհրաժեշտ վաղ կամ անագան պէտք է հասնինք այն վախճանին։ Մահն միշտ կու զարնէ, կու զարնէ ըստ դիպաց, և երբեմն այլ կարծես թէ կ'ընտրէ իր զոհերը։ Պէտք է երթանք՝ ուր որ մեր ծնողքն գացին. պէտք է հասնիլ այն հասարակաց բնակարանը, ուր գիտուն և տգէտ, հարուստ և աղքատ՝ կ'երթան ծածկուելու և խառնելու յիրար իրենց փոշին։

Այո, ամէն քաղաքի մէջ, ամէն գեղի մէջ, կայ տեղ մը որ կու ներկայացընէ տխուր պատկերներ, և երբեմն նաև սրտաբեկ և ահաւոր։ Այս պալատիս դիմաց կայ խոնաւ և զզուելի փոս մը, այս հիւղիս առջև կայ աւելի նեղ և աւելի տխուր բնակարան մը. այն շքեղ պարտիզաց դիմաց կայ դաշտ մը միշտ մոլոշներով և մոխրածաղկով ծածկուած. այս ուրախութեանց քով արտասուք կան. այն աղաղակաց քով սառուցանող լռութիւն մը. այն զուարթ երեսաց մօտ՝ չոր և այլանդակ գլուխներ. այն տօնական հանդերձից քով՝ պատանաց կտաւներ. այն անուշահոտութեանց քով՝ հոտ նեխոյ. այն փութաջան ծառայից քով՝ անխոնջ մեռելաթաղ. քաղքին քով և գեղին քով՝ կայ գերեզմանոց մը, անդադար կը լցուի մեռելներով, ինչպէս մէկալոնք ողջերով։

Հոն կու տարուի հազիւ ծնած տըղայն, լալով իր կենաց վերջին բարև տուող ծերն. մօրը գգուանքներէն ու հարսնութեան երջանիկ յոյսէն կորզուած օրիորդն, երիտասարդն իր ակն-

կալութեանց մէջ զարնուած, բանաստեղծն հազիւ իր առջի երգերը չինած, պատերազմիկն իր յաղթութեանց աշխուժին մէջ, արդարն իր առաքինութիւններովը պսակեալ, անիրաւն իր չարեօքը ծածկուած։

Սիրելի է ինձ, յայց ելնել գեղի և հարուստ քաղաքաց գերեզմանոցներուն։ Չեմ գիտեր ինչ ազդմունք, ինչ գաղտնի տխրութիւն մը զիս հոն կը ձգէ։ Գիւղին մէջ, միայն խաչ մը կը պաշտպանէ բոլոր մեռեալները, և ոչ մէկ գերեզման մը չյայտներ քեզի վախճանելոյն անունը։ Բայց չէ՛. երբեմն խաչին ներքև, այն ծանօթ տեղը՝ ուր այնչափ արտասուօք կ՚ոռոգուի, մէկ պարզ քար մը կու պահէ սիրեցեալ հոգւոյն կամ առատաձեռն բարերարի մը անունը։ Գիւղին մէջ միշտ գերեզմանոցը զեկեղեցին կը պատէ, որպէս զի մեռելոց յիշատակն ներկայ ըլլայ և ձայներնին լսելի ըլլայ անցնողներուն և հոն եկող աղօթողներուն։

Քաղաքաց մէջ մարդիկ հեռացուցած են այս լռութեան բնակարանը, յետինն այն շառաչող բնակութեանց՝ ուր մարդ օր մը միայն կ՚անցընէ։ Կարծես թէ չեն ուզեր յիշել, թէ ամենայն ինչ ունայնութիւն է, և թէ օր մը պէտք է երթալ այն ճամբէն՝ ուր քահանայն մեզի հետ ընկերելով պիտի աղաչէ զԱստուած որ մեզի համար խաղաղութեան և լուսոյ ճամբայ մը ըլլայ այն։ Քաղաքաց մէջ հպարտութիւնն կ՚երթայ ինչուան մեռելոց վերջին ապաստանարանը. ամէնքն կու ջանան մէկմէկէ աւելի թողու իրենց պզտիկ էութեանը յիշատակը, և շատ անգամ այս ողբալի նախանձորդութիւնս իրենց խայտառակութիւնը և թշուառութիւնը կու մշտնջենաւորէ։ Այդ պատուանուններով և նշանակներով բեռնաւորած շիրիմներէն աւելի կ՚ընտրեմ այն պարզ տապանը, որոյ վրայ կու կարդամ այս համառօտ խօսքերս. — Բարեկամ մը իր բարեկամին։ — Իր սիրեցեալ մօրը՝ անմխիթար դուստրն։ — Իր սիրեցեալ և մէկհատիկ որդւոյն՝ թշուառ հայր մը։ — Ահաւասիկ հոս կու կենամ ես, հոս կու լամ ու կ՚աղօթեմ։

Սակայն կ՚ապշիմ այն մեծամեծ և հոյակապ գերեզմանաց վրայ, որ բացուած են պատերազմողաց՝ խորին անտառներու մէջ, աշխարհակալաց՝ գետոց յատակներուն մէջ, դիւցազանց՝ հեռու կղզեաց և անապատներու մէջ, և գեղեցիկ հանճարաց՝ Ովկիանոսի դիմաց։ Ատեն մը ծովն վայրենի վսեմութեամբ մը կու բախէր այն անուանի ժայռը՝ ուր վերջին շունչը տուաւ և ուր կու հանգչէր՝ նոր ժամանակաց ամենէն մեծ պատերազմողն[1]. սէգ և մռընչող Ովկիանոս կու բախէ այն մատենագրին[2] գերեզմանը, որ կու նուաճէր զհոգիս, (մինչդեռ դիւցազնն՝ թևերու շարժել կու տար), որուն գրչին յիշատակներն աւելի փառաւոր և պայծառ պիտի մնան քան աշխարհակալին սրոյն։

Բայց ծածկուեցէք գոռոզ գերեզմանք, որք կորուսիք կամ դեռ կը սպասէք ձեր մռայլ բնակչաց. Ջնջուեցէ՛ք դուք, առաքելոց և մարտիրոսաց նշխարաց վրայ կանգնած վսեմ տապանաց առջև, այն եկեղեցւոյն դիմաց՝ որ յաւիտենական քաղաքին և բոլոր աշխարհիս համար կանգնուած է։ Ջնջուեցէ՛ք դուք, մանաւանդ այն աստուածային գերեզմանին առջև, որուն քարը տասնըութ դարէ 'ի վեր կու մաշի՝ բարեպաշտ ճանապարհորդաց համբոյրից տակ. զոր ստանալու համար՝ դղրդեցաւ երբեմն բոլոր Եւրոպա, և որ պիտի մնայ միշտ աշխարհիս լուսոյ և երկրպագութեան տեղ մը։

Գերեզման Յիսուսի, քեզմէ կ՚առնում այն յոյսը՝ որ պիտի լեցընէ իմ գերեզմանս. իմ մարմինս պիտի հանգչի այդ յուսոյ մէջ. արդէն այդ է իմ մխիթարութիւնս և իմ բերկրութիւնս. և կու ցաւիմ անոնց վրայ որք կու տագնապին այդ յոյսը չունենալուն համար։ Փայլակնաձև հրեշտակ, որ բացիր

1. Նաբոլէոն։
2. Շադոպրիան։

Քրիստոսի գերեզմանը, եկ օր մ՚ալ բաց իմինս։ Գերեզմանն մեկ ամպ մ՚է. երբ դու՝ արդարները կանչելու ձայնդ ձգես, անոնք արևու պես լուսափայլ պիտի ելլան անկից. և օդուն մէջ յափշտակուած՝ տարուին Քրիստոսի առջև, և յաւիտեանս Աստուծոյ հետ պիտի ըլլան։ Միխիթարենք մեկզմեկ այս խօսքերուս զմայլեցուցիչ քաղցրութեամբը։

Մանծոնի։

Ալեքսանդր Մանծոնի, անուանի բանաստեղծ Իտալացի, ծնաւ 'ի Միլան յամին 1784։ Իր հայրը, Թէպէտ և կոմս, բայց անհրահանգ մարդ մըն էր, իսկ մայրը խիստ նշանաւոր կին և Պեգգարիայի աղջիկն էր, որ Յանոյանի Պոպիթի ըսուած համբաւաւոր ճառն գրած է։ Պատանին Մանծոնի տղայութեան ժամանակն իր պապուն հետ կենակցելով, անոր մտածութիւնքն իր վրան ազդեցին, և համբակութենէն սկսեալ Վոլդէռի հետևող և փիլիսոփայ եղաւ, և այս պատճառաւ ետքէն հասարակաց կրթութեան հակառակ սաստիկ ընդդիմութիւն մը ունեցաւ։ Այսու հանդերձ կատարելապէս իր ուսմունքներն ըրաւ 'ի Միլան, ետքն 'ի Բաւիա, և Ալֆիերեայ, Մոնդիի ու Ֆոսգոլոյի վրայ սաստիկ սեր կապեց։ Յամին 1805, մօրը հետ Բարիզ գնաց, ուր Պեգգարիայ անուամբն ընդունուեցաւ պեսոկաբանիդ անուանի ընկերութենէն, որ այն ատեն Օդէոյ կը հաւաքուէր, և որուն անդամ էին Վոլնեյ, Գապանիս, Կարա, Տը Գրաֆի և Ֆորիէլ։ Այս յետինս Մանծոնի մտերիմ բարեկամն եղաւ, որուն ընծայեց Մանծոնի իր Կոմն Գարմանեոլա ողբերգութիւնը։

Այս նախընտիր կաճառոյն հովանաւորութեանը ներքև, հետևեալ տարին սկսաւ քերդողն իր ասպարէզը անյանգ ոտանաւորով մը, ներշնչեալ իր ազգականաց մեկուն կանխահաս մահուամբը, այս վերնագրով. 'Ի մահ Կարոլոսի Իմպոնոդեայ (Բարիզ. 1806)։ Հասարակ կեղերջական ողբոց մէջ նշանաւոր սեպուեցաւ այս կտորս որ կերպով մը իր կենացը նկարագիրն եղաւ.

Ոչ ընդ վատաց գոլ դաշնադիր, կամ մատնիչ
Սուրբ իրաւանց. ոչ ընդ շրթունս հանել բան՝
Ի գովս ախտին և կամ ի հենգն բարւոյն։

Մօրը հետ (1807) Միլան դառնալէն ետև գենուացի սեղանաւորի մը Ուիլիանրիէդ Պլոնտէլ դստեր հետ ամուսնացաւ, յամին 1808։ Այս ժամանակին 'ի լոյս ելաւ դիցաբանական քերդուածն Ռոբանիա (1809), որ համարեցաւ հաւաքածոյ մի իտալական անհամ քերդուածոց։

Բայց սակայն Մանծոնի իր առած դատիարակութեանն հակառակ, ուսանդնալից ոգւոմբ վառուած, մղումն կը զգար յուղղափառութիւն, առ որ իր կինը դարձած էր. որուն բացարձակ սկզբունքներն քիչ մը վերջն ընդունեցաւ, և գեղեցկահիւս քերդողական երկասիրութեամբ մը իր այս մտածութեանց փոփոխութիւնը պանծացուց։ Այս գրուածքը կը կոչուի Տաղ սրբոյն (Միլան, 1810), և է հաւաքածոյ երգոց 'ի ծնունդ Տեառն, 'ի Զարչարանն, 'ի Յարութիւնն, 'ի Գալուստ Հոգւոյն սրբոյ, և 'ի Վերափոխումն Կուսին, որոնց մէջ հեթանոսական ձեւերը թողլով, նոր քնարերգական բանաստեղծութիւն մը կը ստեղծէ, լի ուռանդեամբ և ամբարձմամբ մտաց։ Ետքն ետևէ եղաւ ազգային մատենագրութիւնը բոլորովին վերանորոգել, և